

Խաբկանք՝ գենետիկ ստուգմամբ

2019



ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՈՒՄ ԿԱԼԻՖՈՐՆԻԱՅԻ ՏԱՐԵՑՆԵՐԻ MEDICARE-Ի ՊԱՐԵԿԻ ԿՈՂՄԻՑ

Ոմանք, հեռախոսազանգերի, հանդիպումների, և հանրակրթական սեմինարների միջոցով, գովազդելով գենետիկ ստուգումներ, միգուցե փորձեն նման ստուգման միջոցով խարդախել և չարաշահել Medicare-ը:

Հարցրեք ձեր բժշկին, թե արդյոք գենետիկ ստուգումն անհաժեշտ է ձեր առողջության համար:

855-613-7080

Առողջապահական
խարդախության մասին առավել
տեղեկության համար, այցելեք
cahealthadvocates.org



Մյուս էջում առավել մանրամասներ կան այս խարդավանքի
նախազգուշացման վերաբերյալ:

Խաբկանք՝ գենետիկ ստուգմամբ

Եթե ձեզ «անվճար» գենետիկ ստուգում կամ քաղցկեղի ախտորոշում առաջարկեն, մերժեք: Այդ ստուգումն անվճար չէ, իսկ եթե առողջության համար է անհրաժեշտ, ապա ընտանեկան բժիշկն է պատվիրում:

Մեծ մասաներին հասնելու համար այս խաբեբաները մոտենում են տարեցների կենտրոններին կամ մեծահասակների բնակարանների կոորդինատորներին:

Որոշ խաբեբաներ գենետիկ ստուգման փաթեթի մասին են զանգում տարեցին: Չանգելով առաջարկում են անվճար փաթեթ, և խնդրում են վերադարձնել այն «բուժապահովագրության տեղեկությամբ», որպեսզի Medicare-ից բժշկական տեսանկյունից ոչ անհրաժեշտ գենետիկ ստուգման համար հազարավոր դոլլարներ գանձեն:

Խաբեբաները, մարդկանց գրավելու համար, երբեմն ոչ պաշտոնական հավաքույթ են առաջարկում, որտեղ պաղպաղակ են մատուցում, երբեմն էլ առաջարկում են բնակիչներին «անվճար» գենետիկ ստուգման և/կամ քաղցկեղի ախտորոշման մասին անվճար տեղեկություններ կայացնել: Ներկայացման ընթացքում, բնակիչներին հարցնում են նրանց Medicare-ի համարը, որպեսզի այս «անվճար ծառայությունների» համար հազարներ գանձեն:

Յիշեք.

- » **Ձեր ԴՆԹ-ն մի տվեք անձանորթին:** Չզուլացեք նրանցից, ովքեր, զանգահարելով մեծահասակների կենտրոններ կամ բնակարաններ այցելելով առաջարկում են անվճար գենետիկ ստուգումներ և քաղցկեղի ախտորոշումներ: Նախ, ձեր բժշկի հետ ճշտեք:
- » **Առողջապահական խարդախության զոհ մի դարձեք:** Չզուլացեք նրանցից, ովքեր Medicare-ի կողմից 100% վճարվող գենետիկ ստուգում և քաղցկեղի ախտորոշում են առաջարկում: Medicare-ը միայն բժշկական տեսանկյունից անհրաժեշտ ստուգումների համար է վճարում:
- » **Ձեր Medicare-ի քաղվածքում կա՞ն արդյոք ավելորդ ստուգումների և աշխտորոշման վճարումներ,** որոնք ոչ դուք եք ցանկացել, ոչ էլ ձեր բժիշկն է պատվիրել:



Նման խարդախության բախվելուց, խնդրում ենք տեղեկացնել Կալիֆորնիայի Տարեցների պարեկին
855-613-7080